ՍԻԼՎԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կրթություն

1973-1979թթ. – սովորել է Երևանի Մ.Հերացու անվան բժշկական ինստիտուտում:

1979-1982թթ.- աշխատել է Կրասնոսելսկի(Ճամբարակ) ՍԷԿ-ում, սկզբում որպես ընդհանուր սանիտարական բժիշկ, 1980թ.-ից , մասնագիտացումից հետո, որպես բժիշկ-մանրէաբան:

1982-12.1985թթ. – սովորել է նպատակային ասպիրանտուրայում Մոսկվայի Լենինի շքանշանակիր բժիշկների կատարելագործման ինստիտուտի մանրէաբանության ամբիոնում:

1986թ. – գերազանց ավարտելով ուսումը, Մոսկվայում պաշտպանել է բ.գ.թեկնածուական ատենախոսությունը «Некоторые биологические характеристики Pseudomonas aeruginosa и их значение для лабораторной диагностики» թեմայով:

Մասնագիտական գործունեություն

12.1985թ. – 1992թ-ից առ այսօր հանդիսանում է ԱԱԻ մանրէաբանության ամբիոնի վարիչ:

1997թ-ից – Դիֆտերիայի Եվրոպական լաբորատոր աշխատանքային խմբի անդամ է, 1998թ-ից – համաձայն ՀՀ ԱՆ 19.06.1998թ. թիվ 339 հրամանի, հանդիսանում է ամբիոնի լաբորատորիայի բազայի հիման վրա ստեղծված դիֆտերիայի ռեֆերենս լաբորատորիայի ղեկավար:

Ավելի քան 60 տպագիր աշխատանքների, մեթոդական ձեռնարկների, երկու գյուտի հեղինակ , մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների եվրոպական երկրներում (Մեծ Բրիտանիա, Դանիա, Ավստրիա, Բելգիա, Հունաստան, Կիպրոս, Ռուսաստան և այլ) զեկույցներով, անցել բազմաթիվ մասնագիտացումներ և տրենինգներ կլինիկական մանրէաբանական հետազոտությունների վերաբերյալ արտերկրներում և Հայաստանում:

Աշխատանքային գործունեության ուղղություններն են՝ ուսումնական, գիտական (նախաձեռնությամբ), մեթոդական, գործնական ախտորոշիչ (կլինիկական և սանիտարական մանրէաբանական), խորհրդատվական:

Մասնագիտական բազմամյա ծառայության և աշխատանքային հաջողությունների և նշանակալի ավանդի համար պարգեվատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով (թիվ 107; 17.09.2011թ.), ՀՀ ԱՆ պատվոգրով, ԱԱԻ պատվոգրով և ոսկե մեդալով: